

Մարմնի շարժման արագությունը միավոր ժամանակում նրա անցած ճանապարհն է:

70կմ/ժ արագությունն ասելով հասկանում ենք, որ մարմինը 1ժ-ում անեցել է 70կմ ճանապարհ:


Արագություն = Ճանապարհ : Ժամանակ

Ճանապարհ = Ժամանակ · Արագություն

Ժամանակ = Ճանապարհ : Արագություն


Խնդիրներ

- Բեռնատարը 740 կմ ճանապարհի առաջին 320կմ-ն անցավ 80կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:



1) $740 - 320 = 420$, 2) $320 : 80 = 4$ ժ , 3) $420 : 60 = 7$ ժ , 4) $7 + 4 = 11$

- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ 1620կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 10 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 2 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը:




1) $10-2=8\text{ժ}$, 2) $10+8=18\text{ժ}$, 3) $1620:18=90\text{կմ}$, 4) $90\times 10= 900$

- A քաղաքից միննույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 8 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 60կմ, իսկ երկրորդը՝ 80 կմ:



1) $60\times 8=480$, 2) $80\times 8=640$, 3) $640-480=160\text{կմ}$


- Երևանից հակադիր ուղղություններով շարժվեցին երկու ավտոմեքենա: Քանի՞ ժամ հետո նրանց միջև եղած հեռավորությունը կլինի 780կմ, եթե մեկը շարժվում է 70կմ/ժ արագությամբ, իսկ մյուսը՝ 10կմ/ժ-ով պակաս արագությամբ:



$70-10=60$, $60+70=130$, $780:130=6\text{ժ}$,


- 480կմ հեռավորության վրա գտնվող 2 քաղաքներից միաժամանակ իրար հանդիպակաց դուրս եկան երկու

ավտոմեքենա և հանդիպեցին 3 ժամ հետո: Առաջինը գնում էր 60կմ/ժ արագությամբ: Որոշիր երկրորդ մեքենայի արագությունը:



$$60 \times 3 = 180 \text{ կմ} , 480 - 180 = 300 , 300 : 3 = 100 \text{ կմ}$$

- A քաղաքից միաժամանակ հակադիր ուղղություններով դուրս եկան երկու ավտոմեքենա : Առաջինի արագությունը 70կմ/ժ էր, իսկ երկրորդինը՝ 20 կմ/ժ -ով ավելի: Որքա՞ն կլինի նրանց հեռավորությունը 3 ժամ հետո:



$$70+20=90, 70+90=160, 160 \times 3=480$$